28
ՓԵՏՐՎԱՐԻ
2023

ԱՄՆ-Ի ԴԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ. ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՅ ԼՈԲԲԻՍՏՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄԸ

ԱՄՆ-Ի ԴԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ. ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՅ ԼՈԲԲԻՍՏՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄԸ

Luys Լույս®

ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՄՆ-ՈՒՄ

Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման խնդիրը ներկայումս քննարկվում է որպես Արցախի ժողովրդի նկատմամբ շարունակվող ադրբեջանական ագրեսիայի կանխարգելիչ մեթոդ: Միացյալ Նահանգների՝ որպես գլոբալ գերտերության կողմից Արցախի Հանրապետության ճանաչումը կարող է դոմինոյի էֆեկտ ունենալ մի շարք արևմտյան պետությունների շրջանում և հանգեցնել Արցախի միջազգային դիրքերի ամրապնդմանը: Հաշվի առնելով, որ Արցախի ճանաչման հարցը ներկայումս Հայաստանում պետական մակարդակով չի բարձրաձայնվում, և կառավարության կողմից որևէ քայլ չի իրականացվում այդ ուղղությամբ, ԱՄՆ-ի կողմից Արցախի ճանաչման գործընթացն իրականացվելու է բացառապես Միացյալ Նահանգներում հայ լոբբիստական կազմակերպությունների և ԱՄՆ-ի հայկական համայնքի ջանքերով:

Ընդհանրապես, ԱՄՆ հայկական լոբբիստական կազմակերպությունները և հայկական համայնքը իրենց աշխատանքում մշտապես ունեն հստակ օրակարգային առաջնահերթություններ, որոնց թվում առաջին տեղում երկար ժամանակ Հայոց ցեղասպանության ճանաչումն էր: Տասնամյակներ մղված աշխատանքի և պայքարի արդյունքում ի վերջո ԱՄՆ-ը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Այս առումով հարկ է նշել, որ հայ լոբբիստների և Հայաստանի պետական առաջնահերթությունները տարբերվում էին, մասնավորապես, երբ հայ լոբբիստները պայքարում էին Հայոց ցեղասպանության ճանաչման համար, հայկական իշխանությունները Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման գործընթաց էին սկսել: Նույն գործընթացը

շարունակվում է նաև ներկայումս, որին դեմ է արտահայտվում ԱՄՆ-ի հայկական համայնքը:

ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմամբ հնարավորություն ստեղծվեց ավելի մեծ ուշադրություն ու ջանքեր ուղղել այնպիսի արդիական հարցերի վրա, ինչպիսիք են՝ ուղիղ աջակցություն Արցախին, ԱՄՆ կողմից Արցախի ճանաչում, ֆինանսական աջակցություն Հայաստանի Հանրապետությանը, 907-րդ բանաձևի ուժի վերադարձ, ինչպես նաև մի շարք ուղղություններով Հայաստանին և Արցախին տրամադրվող օգնություն:

Հաշվի առնելով 2020թ. 44-օրյա պատերազմը և դրանից հետո ծավալվող իրադարձությունները՝ մասնավորապես, Ադրբեջանի կողմից Հայաստանի և Արցախի նկատմամբ պարբերական ագրեսիան և երկու ամսից ավելի տևող Արցախի շրջափակումը՝ հայ համայնքի և լոբբիստների գլխավոր առաջնահերթությունն այժմ հենց Արցախի հիմնախնդիրն է: Դրա վառ վկայությունն է այն, որ ԱՄՆ-ում հայկական լոբբիստական կազմակերպությունները և հայ համայնքը Արցախի և արցախահայության շրջափակման առաջին օրվանից մեծ ջանքեր են գործադրում՝ փորձելով ԱՄՆ պետական կառույցների վրա իրենց ազդեցության միջոցով հասնել Արցախի ապաշրջափակմանն ու Արցախին լրացուցիչ աջակցության տրամադրմանը:

Ակնհայտ է դառնում, որ ԱՄՆ-ում Արցախի ճանաչման գործընթացի գլխավոր շարժիչ ուժը լինելու են ԱՄՆ-ի հայկական լոբբիստական կազմակերպությունները և հայ համայնքը: Իրականում այս գործընթացը վերջիններս սկսել են դեռևս տարիներ առաջ՝ նահանգային մակարդակով: Նահանգային մակարդակով ճանաչման գործընթացի իրականացումը թերևս ամենահիրատեսական և ռացիոնալ տարբերակն է ներկայիս պայմաններում: Անմիջապես դաշնային մակարդակով ճանաչման գործընթացը սկսելը նպատակահարմար չէ այն առումով, որ ԱՄՆ դաշնային կառավարական մարմինները առաջին հերթին առաջնորդվում են աշխարհաքաղաքական շահերով և առաջնահերթություններով, որոնց շրջանակում Արցախի ճանաչումը չի տեղավորվում: Ի հակադրություն դաշնային մակարդակի՝ նահանգային մակարդակով որոշումների կայացման մեխանիզմն այլ կերպ է գործում. մասնավորապես, նահանգային կառավարման մարմիններում համայնքային շահերին առավել մեծ ուշադրություն են դարձնում, քանի որ ինքնին համայնքներն այս մակարդակում առավել ազդեցիկ են և առավել հեշտ են կարողանում հասնել ցանկալի որոշումների ընդունմանը:

Նման գործելաոճի արդյունավետության ամենավառ օրինակը Հայոց ցեղասպանության ճանաչումն էր՝ նախ նահանգային մակարդակով, այնուհետև՝ դաշնային: Այս պարագայում կիրառվել էր այսպես կոչված «bottom-up» մոտեցումը,

այն է՝ ճնշումը սկսելով ներքևից (նահանգային մակարդակից), հասցնելով մինչև իշխանական բարձր օղակներ:

Արցախի անկախության ճանաչման համար կարելի է առաջ շարժվել հենց այս նույն մոդելով, բայց միաժամանակ հարկավոր է ԱՄՆ Կոնգրեսում բանաձևեր առաջադրել Արցախի ճանաչման ուղղությամբ. նախ, ԱՄՆ օրենսդիր մարմինների շրջանում սկզբնական շրջանում հարցի իրազեկում իրականացնելու համար, իսկ նահանգային մակարդակում ճանաչման իրականացումը դրան զուգահեռ պետք է ապահովի ներքին ճնշում ԱՄՆ Կոնգրեսի կողմից վերջնական ճանաչումն իրականացնելու համար:

Ներկայումս ԱՄՆ-ի շուրջ մեկ տասնյակ նահանգներում բանաձևեր են ընդունվել Արցախի ինքնորոշման իրավունքի ճանաչման մասին: Ստորև կներկայացվեն այն նահանգները, որոնք ճանաչել են Արցախի Հանրապետությունը, և թե ինչպես է հնարավոր եղել իրականացնել այդ գործընթացը:

ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԱԾ ԱՄՆ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

Ռոդ Այլենդը ԱՄՆ առաջին նահանգն է, որը ճանաչել է Արցախի անկախությունը՝ 2012թ. մայիսի 17-ին, նահանգի Ներկայացուցիչների պալատի կողմից: Հատկանշական է, որ ԱՄՆ-ում և Կանադայում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցիչը տեղի հայ համայնքի պատվիրակության հետ, ներկա էր բանաձևի ընդունմանը:[1] Ներկայացուցիչների կողմից ընդունված բանաձևը հորդորում էր ԱՄՆ նախագահին և Կոնգրեսին «ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը և խրախուսել Հանրապետության հարևան երկրներին՝ խթանելու և պահպանելու խաղաղ հարաբերությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի հետ»:[2]

Մասաչուսեթս նահանգի Ներկայացուցիչների պալատը երկրորդն էր, որ 2012թ. օգոստոսին ընդունեց բանաձև, որով ճանաչեց Արցախի անկախությունը: Բանաձևն առաջադրվել էր ներկայացուցիչ Ջոնաթան Հեխթի կողմից, որով կոչ էր արվում «ԱՄՆ նախագահին և Կոնգրեսին աջակցել Լեռնային Ղարաբաղի ինքնորոշմանը և անկախությանը»:[3] Բանաձևում ասվում էր, որ «այս

[1] Rhode Island House calls for Nagorno Karabakh recognition, https://www.panarmenian.net/eng/foreign/news/108019/, (14.02.2023).
[2] Full Text of RI House Resolution on Artsakh, https://armenianweekly.com/2012/05/18/full-text-of-ri-house-resolution-on-artsakh/, (14.02.2023).
[3] Massachusetts Legislature Supports Artsakh Independence, https://armenianweekly.com/2012/08/07/breaking-news-massachusetts-legislature-supports-freedom-of-artsakh/, (14.02.2023).

հակամարտության միակ խաղաղ, երկարատև լուծումը Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումն է»:[4]

2013թ. ապրիլին ԱՄՆ-ի **Մեյն** նահանգը ընդունեց Արցախը ճանաչող բանաձև՝ առաջադրված ներկայացուցիչ Սքոն Հեմանի կողմից: Հեմանին միացան ներկայացուցիչներ Ա. Մ. Գեթինը և Ս. Գիդեոնը՝ որպես բանաձևի հիմնական աջակիցներ: Ներկայացուցիչ Հեմանը սերտորեն համագործակցում էր Մեյն նահանգում գործող Հայ դատի հանձնախմբի և հայ համայնքի առանցքային առաջնորդների հետ, որոնցից գլխավորը՝ Աննա Աստվածատուրյան Թերքոթն էր, Բաքվի ջարդերը վերապրած իրավաբան և «Արտաքսում. Դեպի անհայտություն» գրքի նշանավոր հեղինակը: Բանաձևի ընդունմամբ Մեյն նահանգը դարձավ ԱՄՆ երրորդ նահանգը, որն ընդունեց Արցախի Հանրապետությունը ճանաչող բանաձև:[5] Բանաձևով խրախուսվում և աջակցվում էր «Արցախի Հանրապետության շարունակական ջանքերը՝ զարգանալու որպես ազատ և անկախ պետություն՝ իր քաղաքացիներին երաշխավորելու ազատ և անկախ հասարակությանը բնորոշ իրավունքները»: Ինչպես նաև կոչ էր արվում Միացյալ Նահանգների նախագահին և ԱՄՆ Կոնգրեսին «սատարել Արցախի Հանրապետության ինքնորոշմանն ու անկախությանը և նրա կառուցողական ներգրավվածությանը միջազգային հանրության ջանքերում՝ հասնելու այդ ռազմավարական կարևոր տարածաշրջանում անվտանգության խնդիրների արդար և կայուն լուծմանը»:[6]

ԱՄՆ **Լուիզիանա** նահանգը Արցախի անկախությունը ճանաչած չորրորդ նահանգն է: Արցախի անկախությունը ճանաչվել է 2013թ. մայիսի 30-ին՝ Սենատի կողմից ընդունված բանաձևով: Բանաձևը ներկայացվել էր Սենատոր Էդվին Մյուրեի կողմից, սակայն այս նախաձեռնության առաջմղման և հաջողության մեջ ևս մեծ ներդրում էին ունեցել հայ լոբբիստները, մասնավորապես՝ Վազգեն Կալթակճյանը՝ Լուիզիանա նահանգի Ամերիկայի հայկական խորհրդի նախագահը, ով հստակ աշխատանք է տարել օրենսդիրների հետ այս հարցում:[7] Սենատի կողմից ընդունված

[4] H.Res.1203 - Expressing the sense of the House of Representatives supporting the Republic of Artsakh at all levels of civil society and government and recognizing the people of Artsakh's inalienable right to self-determination, https://www.congress.gov/bill/116th-congress/house-resolution/1203/cosponsors?s=1&r=1, (15.02.2023).
[5] Maine Recognizes Independence of Nagorno Karabakh Republic, ANCA, https://anca.org/press-release/maine-recognizes-independence-of-nagorno-karabakh-republic/, (15.02.2023).
[6] Joint Resolution Memorializing the President of the United States and the United States Congress to Support the Independence of the Nagorno-Karabakh Republic, Maine Legislature, https://www.mainelegislature.org/legis/bills/bills_126th/billtexts/HP098701.asp, (16.02.2023).
[7] Louisiana State Senate Recognizes Karabakh Independence, https://anca.org/press-release/louisiana-state-senate-recognizes-karabakh-independence/, (16.02.2023).

բանաձևն ամրագրում էր, որ «Լուիզիանա նահանգի Սենատը սույնով խրախուսում և աջակցում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շարունակական ջանքերին՝ զարգանալու որպես ազատ և անկախ պետություն՝ երաշխավորելու իր քաղաքացիներին ազատ և անկախ հասարակությանը բնորոշ իրավունքներով»:[8]

Կալիֆոռնիա նահանգում Արցախի ճանաչման բանաձևը առաջադրվել էր Մայք Գատտոյի կողմից: Բանաձևով խրախուսում էր Արցախի շարունակական ջանքերը՝ զարգանալու որպես ազատ և անկախ պետություն և պաշտոնապես կոչ էր արվում «Միացյալ Նահանգների նախագահին և Կոնգրեսին՝ աջակցել Արցախի Հանրապետության ինքնորոշմանը ու անկախությանը»: Բանաձևն ընդունվել էր Կալիֆոռնիայի նահանգային ժողովի կողմից 2014թ. մայիսին՝ ձայների մեծամասնությամբ՝ պատվավոր խոսնակ Ջոն Պերեսի ղեկավարությամբ:[9]

2016թ. մարտին Արցախի անկախությունը ճանաչվել է **Ջորջիա** նահանգի Ներկայացուցիչների պալատի կողմից: Արցախի անկախությունը ճանաչող բանաձևը ներկայացվել էր ներկայացուցիչներ Փեթ Գարդների և Դեմետրիուս Դուգլասի կողմից: Այս երկու ներկայացուցիչները սերտորեն աշխատել էին Ջորջիա նահանգի Հայ դատի հանձնախմբի անդամներ Սարկիս Ագասարկիսյանի և Հարություն Ագասարկիսյանի հետ, ովքեր տարիներով աշխատել են ԱՄՆ տարբեր մակարդակի պաշտոնյաների հետ՝ Հայաստանի և Արցախի հետ կապված հարցերն առաջ մղելու ուղղությամբ:[10] Հայ լոբբիստների ջանքերով ընդունված այս բանաձևը ամրագրեց, որ Ներկայացուցիչների պալատը «կոչ է անում միջազգային հանրությանը պատշաճ կերպով ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես ազատ, անկախ և ինքնիշխան ժողովրդավարություն»:[11]

Իսկ 2016թ. մարտին **Հավայի** նահանգի Ներկայացուցիչների պալատում հաջողվեց ընդունել Արցախի անկախությունը ճանաչող բանաձևը՝ չնայած Ադրբեջանի դեսպանության համառ ջանքերին և ճնշումներին՝ կանխելու բանաձևի ընդունումը: Ավելին, առանցքային քվեարկությունը տեղի ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի՝ Վաշինգտոն այցից (միջուկային գագաթնաժողովին մասնակցելու համար) ընդամենը 24 ժամ առաջ: Բանաձևի ընդունման համար մեծ ջանքեր էր գործադրել ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախմբի Արևմտյան շրջանը՝

[8] A Resolution of the Senate of the State of Louisiana, http://www.nkr.am/en/news/2013-06-01/529, (17.02.2023).
[9] California Legislature, Assembly Joint Resolution, https://www.deutscharmenischegesellschaft.de/wp-content/uploads/2014/07/Bill-Text-AJR-32-The-Nagorno-Karabakh-Republic.pdf, (17.02.2023).
[10] Georgia Recognizes Independence of Nagorno Karabakh Republic, https://anca.org/press-release/georgia-recognizes-independence-of-nagorno-karabakh-republic/, (17.02.2023):
[11] House Resolution 1580, https://www.legis.ga.gov/api/legislation/document/20152016/159406, (17.02.2023).

աշխատելով հայ համայնքի ներկայացուցիչ Արթուր Արթենյանի և Ներկայացուցիչների պալատի առանցքային օրենսդիրների հետ:[12] Ընդունված բանաձևում ասվում էր. «Հավայի նահանգի քսանութերորդ օրենսդիր մարմնի Ներկայացուցիչների պալատի կողմից 2016թ. հերթական նստաշրջանում որոշվել է ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և նրա քաղաքացիներին... և այս մարմինը խրախուսում է միջազգային հանրությանը ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես ազատ, անկախ և ինքնիշխան ժողովրդավարություն»:[13]

Միչիգանը Արցախի անկախությունը ճանաչած ութերորդ նահանգն է: Համապատասխան բանաձևն ընդունվել է Միչիգանի Սենատի կողմից: Բանաձևով Միչիգանի Կոնգրեսը կոչ է անում «Միացյալ Նահանգների նախագահին և Կոնգրեսին ճանաչել ազատ և անկախ Արցախի Հանրապետությունը»: Բացի այդ, կոնգրեսականները արձանագրում են, որ Միացյալ Նահանգների կառավարությանը անհրաժեշտ է «ամրապնդել ԱՄՆ տնտեսական և մշակութային հարաբերությունները Արցախի Հանրապետության և նրա քաղաքացիների հետ»:[14]

2019թ. ապրիլի 24-ին **Կոլորադո** նահանգի Սենատը միաձայն կողմ քվեարկեց ապրիլի 24-ը «Հայոց ցեղասպանության հիշատակի օր» ճանաչելու մասին բանաձևին, որով նաև ճանաչվում էր Արցախի Հանրապետությունը: Բանաձևն առաջադրվել էր դեմոկրատ սենատոր Դոմինիկ Մորենոյի և հանրապետական սենատոր Ջեք Թեյթի կողմից: Բանաձևում ասվում էր, որ «Հայոց ցեղասպանության և դրա անպատժելիության շարունակական հետևանքները կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության՝ առանց այն էլ դեպի ծով ելք չունեցող քույր պետությունների, թուրք-ադրբեջանական շրջափակմանը»:[15]

ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախմբի տարածած տեղեկատվության համաձայն՝ 2021թ. ապրիլի 24-ին Արցախի անկախությունը ճանաչել է նաև ԱՄՆ **Այդահո** նահանգը: Բանաձևն ընդունվել էր Սենատի կողմից և հաստատվել Այդահոյի նահանգապետի կողմից:[16]

---

[12] Hawaii Recognizes Nagorno Karabakh Republic's Independence, https://anca.org/hawaii-recognizes-nagorno-karabakh-republics-independence/, (20.02.2023).
[13] House Resolution 167, House of Representatives Twenty-Eighth Legislature, State of Hawaii, https://legiscan.com/HI/text/HR167/id/1378938, (20.02.2023).
[14] Michigan Recognizes Artsakh Independence, https://anca.org/michigan-recognizes-artsakh-independence/, (21.02.2023).
[15] Senate Resolution 19-012, State of Colorado, https://leg.colorado.gov/sites/default/files/2019a_sr012_signed.pdf, (21.02.2023).
[16] ANCA Statement, https://www.facebook.com/ANCAWesternRegion/posts/10158980010116147, (21.02.2023).

Նյու Ջերսին, որտեղ բնակվում է ավելի քան հիսուն հազար հայ, Արցախի անկախությունը ճանաչել է 2021թ. հունիսին: Այս դեպքում ևս ճանաչումը մեծապես հայ լոբբիստների և հայ համայնքի աշխատանքի արդյունքն էր, մասնավորապես՝ Նյու Ջերսիում գործող Հայ դատի Ամերիկայի Արևելյան շրջանի հանձնախմբի: Վերջիններիս ջանքերով Նյու Ջերսիի Սենատոր Ջոզեֆ Լագանան ներկայացրել էր բանաձև Նյու Ջերսիի Սենատում 2020թ., այնուհետև մի քանի սենատորների աջակցությամբ՝ նաև 2021-ին: Հատկանշական է, որ երբ այս բանաձևը քննարկվում էր Նյու Ջերսի Սենատի Դատական հանձնաժողովում, վկայություն տալու համար հրավիրվել էին ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախմբի հոգաբարձուների խորհրդի անդամ և Արևելյան շրջանի վարչության նախագահ Անի Չագլասյանն ու Նյու Ջերսիի բնակիչ և Նյու Ջերսիում գործող Հայ դատի հանձնախմբի ակտիվիստ Ջո Արիյանը:[17] 2021թ. հունիսի 30-ին Արցախի անկախությունը ճանաչող բանաձևը սահմանեց, որ «Նյու Ջերսիի օրենսդիր մարմինը դատապարտում է Արցախի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ Ադրբեջանի հարձակումները, ճանաչում է Արցախի Հանրապետության ինքնորոշման և անկախության իրավունքը և հարգանքով կոչ է անում Միացյալ Նահանգների նախագահին և Միացյալ Նահանգների Կոնգրեսին անել նույնը»:[18]

Հարկ է նշել, որ այս գործընթացը անհնարին կլիներ առանց ԱՄՆ-ի հայ լոբբիստների և հայ համայնքի ջանքերի, քանի որ Արցախի Հանրապետության անկախությունը ճանաչած յուրաքանչյուր նահանգի պարագայում մեծ աշխատանք են տարել հայկական լոբբիստական կազմակերպությունների տեղի մասնաճյուղերը՝ այդ նահանգներում հայկական համայնքի հետ համատեղ:

ԱՄՆ կողմից Արցախի ճանաչման գործընթացը ավելի արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է նաև նահանգներում իրականցվող գործընթացներին զուգընթաց փորձել բանաձևեր ներկայացնել և դրանք առաջ մղել ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատներում: Նման բանաձև ներկայացվել էր 2020թ. հոկտեմբերի 23-ին՝ Ադրբեջանի կողմից Արցախի դեմ հրահրված պատերազմի ընթացքում, Հայկական հարցերով հանձնախմբի նախագահ Ֆրանկ Փալոնի կողմից: Բանաձևը ստացել էր 42 կոնգրեսականի աջակցություն: Թեև բանաձևի ընդունումը չհաջողեց, ինքնին այս բանաձևի ներկայացումը և այս հարցում իրազեկության ապահովումը ԱՄՆ կոնգրեսականների շրջանում մեկ քայլ առաջ էր:[19]

---

[17] New Jersey becomes 10th US state to recognize Artsakh, https://armenianweekly.com/2021/06/30/new-jersey-becomes-10th-us-state-to-recognize-artsakh/, (22.02.2023).
[18] Senate Concurrent Resolution No. 71, https://pub.njleg.gov/bills/2020/SCR/71_R1.PDF, (22.02.2023).
[19] H.Res.1203., https://www.congress.gov/bill/116th-congress/house-resolution/1203/cosponsors?s=1&r=1, (22.02.2023).

Ամփոփելով, հարկ է նշել, որ շուրջ մեկ տասնյակ նահանգներ արդեն իսկ ճանաչել են Արցախի անկախությունը: Զուգահեռներ անցկացնելով ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հետ՝ հատկանշական է, որ 49 նահանգ ճանաչել էր ցեղասպանությունը՝ Կոնգրեսի և նախագահ Բայդենի կողմից ճանաչվելուց առաջ: Արցախի ճանաչման առումով այս պահի դրությամբ կան նահանգներ, որոնք հստակ աշխատանքի արդյունքում կարող են նահանգապետների կամ նահանգային օրենսդիր մարմինների մակարդակով ճանաչել Արցախի անկախությունը: Այդ աշխատանքը գլխավորապես իրականացվում է ԱՄՆ-ում հայ լոբբիստների և հայկական համայնքի ջանքերով, քանի որ Արցախի ճանաչման հարցը ՀՀ կառավարության օրակարգի մաս չի կազմում: Եթե Հայաստանի ներկայիս արտաքին քաղաքականությունը ունենա հստակ դիրքորոշում Արցախի Հանրապետության ճանաչման հարցում, ապա այդ գործընթացը ԱՄՆ-ում առավել արագ և արդյունավետ կարելի է կազմակերպել: Քանի որ ԱՄՆ-ը գերտերություն է, վերջինիս օրինակին կարող են հետևել շատ այլ արևմտյան պետություններ: Այդ ուղղությամբ աշխատանքը կարող է իր արդյունքը բերել, եթե ՀՀ կառավարությունը և ԱՄՆ-ի հայ լոբբիստներն ու հայկական համայնքը համատեղեն իրենց ջանքերը այդ ուղղությամբ: Այնուամենայնիվ, վերջնական ճանաչման համար աշխարհաքաղաքական իրավիճակն էլ մեծ կարևորություն ունի, և անհրաժեշտ է ճիշտ պահը գտնել դա իրականացնելու համար, ինչպես եղավ ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման պարագայում: Ինչպես արդեն նշվեց, ԱՄՆ 49 նահանգներ ճանաչել էին Հայոց ցեղասպանությունը, կար ներքին մեծ ճնշում Բայդենի վարչակազմի վրա, այնուամենայնիվ այդ գործընթացը չէր հաջողի, եթե չլիներ բարենպաստ աշխարհաքաղաքական իրավիճակ, այն է՝ ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների լարված շրջանը, որն էլ հնարավորություն տվեց Հայոց ցեղասպանության ընդունմանը ԱՄՆ Կոնգրեսի երկու պալատների, հետագայում նաև ԱՄՆ նախագահի կողմից:

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*